Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

03 հուլիսի 2017թ.

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագիր

Վարկ No P148836

Պայմանագիր # TAT-05

Աբովյանի մանկապարտեզի կառուցում

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել **"Աբովյանի մանկապարտեզի կառուցում"** պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:

2. Սույնով **Արարատի մարզի, Աբովյան համայնքի Ծրագրի Իրականացման Կոմիտեն** հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ **Աբովյանի մանկապարտեզի կառուցման համար**: Որակավորման պահանջները ներառում են. ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **244.000.000** դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝քաղաքացիական շենքերի կառուցման և/կամ վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **143.000.000** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **286.000.000** ՀՀ դրամ, գ/ նվազագույնը **27.000.000** ՀՀ դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված "**Քաղաքացիական**", "**Հիդրոտեխնիկական**" **և "Էներգետիկ" լիցենզիաներ**:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

6. Հայտերը պետք է ներկայացվեն միայն էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով ամենաուշը 2017թ-ի հուլիսի 31-ին, ժամը 12:00-ին: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից:

7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի ապահովման հայտարարագրով: